ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2023-ԿԱՊ/ԾԱՍ/Ա-12

ք. Երևան «03» 02 2023 թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալի պարտականությունները ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖՎ և Գ» ՍՊԸ -ն, ի դեմս Վ. Ղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **44 000 000** (քառասունչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա **դեկտեմբերի 25-ը**:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա,

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են նաև մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 01.01.2022թ-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն	**<<ՖՎ&Գ>> ՍՊԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**ք. Երևան, Ազատության 24, 4 շինություն**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**<< ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ**
Աշխատակազմի գործառնական վարչություն	**Հ/Հ 25000105200110**
Հ/Հ 900011021947	**ՀՎՀՀ 03004979**
ՀՎՀՀ 01533334	***հեռ.010-20-81-72***
Հեռ. 010 59-61-52	***էլ. փոստ:*** Info@fvg.am
էլ. հասցեն՝ police_gnumner@police.am	
Վ.Մովսիսյան	**Վ. Ղազարյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	**(ստորագրություն)**
(ստորագրություն)	
Կ.Տ	

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«03» 02 2023 թ. կնքված
ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2023-ԿԱՊ/ԾԱՍ/Ա-12 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույց

Ծառայության

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Ծառայության մատուցման ժամկետը**	
						Սկիզբը	Ավարտ
1	72261160/4	ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ Ծրագրային ապահովման սպասարկումը ընդգրկում է հետևյալ հիմնական աշխատանքները -Տվյալների փոխանակման համակարգչային գերատեսչական ցանցի կառավարում և սպասարկում 24/7 սխեմայով -Մարզերի կապուղիների սպասարկումը կատարվում է զանգերի գրանցման կենտրոնի(Call Center) միջոցով, վարել կատարված զանգերի մշտադիտարկում, պարբերաբար ներկայացնել հաշվետվություն խափանումների և այլ խնդիրների վերաբերյալ -Աբոնենտային սարքավորումների սպասարկում (տեխնիկական և ծրագրային ապահովմամբ) թվով 115 հատ - Գերատեսչական ցանցի արդիականացում համապատասխան ժամանակի պահանջի -Ոստիկանության գեր. ցանցի միացման կազմակերպում այլ գերատեսչությունների հետ -ցանցային հանգույցների մոնիթորինգ -պատահարների գրանցում և վերլուծություն -ցանցի տարբեր հատվածներում գերբեռնվածության ախտորոշում և վերացում -ցանցային բոլոր ենթակառուցվածքների (կապուղիների, սարքավորումների) մոնիթորինգ - պահուստային կապուղիների ապահովում - (սահմանային կետեր, մարզային Ո-եր) -պահուստային կապուղիների անցման մեխանիզմների կառուցում և վերահսկում -ցանցային կառուցվածքի փոփոխություն՝ ըստ կապուղիների ենթակառուցվածքի և ըստ անհրաժեշտության կապի համակցում կապի ծառայություն մատուցող ընկերության հետ (VLAN-ների, կապի տեսակի և արագության ուղղությամբ) -VPN մեխանիզմների կիրառում -Հիմնականից պահուստային և հակառակ ուղղությամբ կապուղիների անցման մեխանիզմների ներդրում, ցանցային սարքավորումների ծրագրային ապահովումների (IOS)	դրամ	44000000	դրամ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	25.12.2023

պարբերաբար թարմացում
- Պայմանագրի արժեքի 9,5%-ի չափով 2022թ. Ընթացքում սարքավորումների տրամադրում և վնասված կամ շահագործմանը ոչ պիտանի սարքավորումների փոխարինում նորով (ըստ ստորև ներկայացված ցանկի)
- տեխնիկական աջակցություն իրականացվում է օրը 24 ժամ, շաբաթական՝ 7 օր,
-Երևան քաղաքի տարածքում գտնվող ստորաբաժանումներում առաջացած խնդիրները պետք է լուծվեն ոչ ուշ, քան 5 ժամվա ընթացքում:
-ՀՀ տարածքում գտնվող քաղաքների ստորաբաժանումներում առաջացած խնդիրները պետք է լուծվեն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:
-ծրագրային և տեխնիկական ապահովման սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարացքում հետևյալ հասցեներով:

-Սպասարկող ընկերության տարածքում ցանցի ամբողջական պահուստային հանգույցի տեղադրում: Հանգույցը պետք է ապահովված լինի անխափան էլեկտրական սնուցման առնվազն 2 աղբյուրից, ինչպես նաև պահուստային այլընտրանքային սնուցման աղբյուրից (գեներատոր, ինվերտոր կամ այլ աղբյուրներ):
Հանգույցը նաև պետք է ապահովված լինի ցանցում գործող բոլոր կապի մատակարար օպերատորներից տրամադված առանձնացված օպտիկական կապուղիներով (DATA), ինչպես նաև սև օպտիկական կապուղով (Dark fiber) պետք է միացված լինի ՀՀ Ոստիկանության կենտրոնական սերվերին: Հանգույցի տեղակայման վայրը ինչպես դրսից, այնպես էլ բոլոր հնարավոր մուտքերից և ներսից պետք է ապահովված լինի տեսաձայնագրման անվտանգության համակարգերով: Հիմնական հանգույցի տեղադրման տարածքը պետք է բավարարի սերվերային սենյակի բոլոր անհրաժեշտ պահանջներին:
-Պարբերաբար, պրոֆիլակտիկ նպատակով, այցելել բոլոր 115 սպասարկման կետերը, գրանցել աշխատանքային պայմանները, սարքավորումների տեխնիկական վիճակը, աջակցել օգտվող անձնակազմին:
-Սպասարկող ընկերությունը պետք է ունենա առնվազն 10 տարվա փորձ, նմանատիպ ցանցերի (ՀՀ ողջ տարածքում) սպասարկման ոլորտում:
-Սպասարկող անձնակազմը պետք է տիրապետի առկա ցանցային սարքավորումների (Cisco, Juniper, և այլն) տեխնիկական և ծրագրային պահանջներին:

-ծրագրային ապահովման սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարացքում հետևյալ հասցեներով:

	Տարածաշրջան	Հասցե	
1.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	
2.	Երևան	Մամիկոնյանց 1, Արաբկիրի ՈԲ	
3.	Երևան	Սարկավագի 48	
4.	Երևան	Նալբանդյան 130	

		5.	Սյունք	Սյունիքի 5 / Նարեկացի 3						
		6.	Սյունք	Կապանի ՈԲ Երկաթուղայինների 4						
		7.	Սյունք	Մեղրիի ՈԲ Զորավար Անդրանիկի 10						
		8.	Սյունք	Սիսիանի ՈԲ , Գարեգին Նժդեհի 6						
		9.	Վայոց Ձոր	Վայքի ՈԲ , Երիտասարդական 2						
		10.	Վայոց Ձոր	ՈԲ Միկոյան 18						
		11.	Կոտայք	Հրազդանի ՈԲ, Ֆիդայինների 1						
		12.	Արմավիր	Արմավիրի ՈԲ Ջիվանու շենք 3						
		13.	Արմավիր	Մաշտոցի 8ա – Վաղարշապատի ՈԲ Կամո 15						
		14.	Արագածոտն	Աշտարակի ՈԲ, Տիգրան Մեծ 46						
		15.	Արագածոտն	Թալինի ՈԲ Գորկու 14						
		16.	Արարատ	Արարատի ՈԲ Շահումյանի 12						
		17.	Արարատ	Վեդի ՈԲ Չարենցի1						
		18.	Արարատ	Արտաշատի ՈԲ , Շահումյան 20						
		19.	Արարատ	Մասիսի ՈԲ ն, Բաղրամյան 30						
		20.	Կոտայք	Հրազդանի ՄՎ Զորավար Անդրանիկի 5						
		21.	Կոտայք	Նոր-Հաճն Չարենցի 12						
		22.	Կոտայք	Չարենցավանի ՈԲ Շահումյան 1						
		23.	Արմավիր	Բաղրամյանի ՈԲ Բաղրամյան 2						
		24.	Կոտայք	Շիրակի 2						
		25.	Շիրակ	Նժդեհի 7 - Պռոշյան 58						
		26.	Շիրակ	Անիի ՈԲ ք.Մարալիկ, Երկաթուղայինների 1						
		27.	Շիրակ	Արթիկի ՈԲ Գորկու 4						
		28.	Տավուշ	Դիլիջանի ՈԲ Մյասնիկյան 57						
		29.	Լոռի	Տաշիրի ՈԲ Պուշկինի 100						

		30.	Լոռի	Սպիտակի ՈԲ Ալեկ Մանուկյան 1Ա						
		31.	Լոռի	Ստեփանավանի ՈԲ Սոս Սարգսյան 37						
		32.	Գեղարքունիկ	Սևանի բաժին , Դեմիրչյան 8						
		33.	Լոռի	Լոռու ՄՎ Տիգրան Մեծի 1/1						
		34.	Տավուշ	Երևանյան 13						
		35.	Գեղարքունիք	Մարտունու ՈԲ , Մյասնիկյան 5						
		36.	Գեղարքունիք	Գավառի բաժին , Սայատյան 91						
		37.	Արմավիր	Մեծամորի ՈԲ Քաղաքապետարանի շենքի հետևը						
		38.	Շիրակ	Ամասիայի ՈԲ ոստիկանության բաժին						
		39.	Շիրակ	Ախուրյանի ՈԲ, Շիրակի 13						
		40.	Շիրակ	Աշոցքի ՈԲ 1 փողոց 12/1 շենք						
		41.	Տավուշ	Տավուշի ՈԲ , ք.Բերդ, Լևոն Բեկի 12						
		42.	Գեղարքունիկ	Վարդենիսի ՈԲ Ազգալդյան 3						
		43.	Գեղարքունիկ	Ճամբարակի ՈԲ , Գարեգին Նժդեհի 122						
		44.	Վայոց Ձոր	Ջերմուկի ՈԲ , Մյասնիկյան 3						
		45.	Արագածոտն	Արագածի ՈԲ , Բժշկյանց 5						
		46.	Սյունք	ԼՂՀ						
		47.	Տավուշ	Նոյեմբերյանի ՈԲ ,Բարեկամության 4						
		48.	Սյունք	Քաջարանի բաժանմունք Աբովյանի 1						
		49.	Լոռի	Թումանյանի ՈԲ ք.Ալավերդի, Թումանյան 3						
		50.	Արագածոտն	Ապարանի ՈԲ , Գայի 9						
		51.	Սյունք	Անձնագրային սեղան,						
		52.	Տավուշ	Անձնագրային սեղան						
		53.	Երևան	Սիմոն Վրացյան 90						
		54.	Երևան	Ծովակալ Իսակովի 29						

		55.	Երևան	Ահարոնյան 3						
		56.	Երևան	Գարեգին Նժդեհ 27						
		57.	Երևան	Մովսես Խորենացի 162						
		58.	Երևան	Արա Սարգսյան 22						
		59.	Երևան	Շինարարների 10/1						
		60.	Երևան	Բորյան 1						
		61.	Երևան	Արցախի 8/16, ՓՔՎ						
		62.	Երևան	Դավիթաշեն 4-րդ թաղամաս, հ.17/10; ԱՎՎ						
		63.	Երևան	Դավիթաշեն 1032 զորամաս, ՀՀ ոստ. Զորքեր						
		64.	Երևան	Խորենացի 158, ՊՊԳՎ Քանաքեռի 14փ 1շ						
		65.	Երևան	Իսահակյան 2, Ավանի ՈԲ						
		66.	Երևան	Մետրոպոլիտենի պահպ.բաժին, Բաղրամյան 76						
		67.	Արագածոտն	ՄՎ ,Երևանյան 1						
		68.	Արմավիրի	Արմավիրի ՄՎ Հանրապետության 22						
		69.	Արարատ	Արարատի ՄՎ, Օգոստոսի 23-122						
		70.	Գեղարքունիկ	Գեղարքունիքի ՄՎ ք.Գավառ, Օգոստոսի 23 շենք 36						
		71.	Շիրակ	Գյումրու Մուշի ՈԲ , Շիրակացի 17						
		72.	Շիրակ	Գյումրու Կումայրիի *Ղորղանյան 91/1*						
		73.	Վայոց Ձոր	Վայոց Ձորի ՄՎ, Միկոյանի 1						
		74.	Տավուշ	Տավուշի ՄՎ, Մելիքբեկյան 5						
		75.	Սյունք	Սյունիքի ՄՎ Մուշեղ Հարությունյան 1Ա						
		76.	Կոտայք	Կոտայքի ՄՎ, Ջորավար Անդրանիկի 1						
		77.	Լոռի	Վանաձորի Տարոնի ՈԲ Մխիթար Գոշի 3						
		78.	Լոռի	Վանաձորի Բազումի ՈՄ Ռուստավի 1						
		79.	Լոռի	Գուգարքի ՈԲ գ.Գուգարք, 1 փողոց 8 շենք						

		80.	Երևան	Նալբանդյան 104						
		81.	Երևան	Քանաքեռ 14, 1 շենք						
		82.	Երևան	Իսահակովի 25						
		83.	Երևան	Բագրատունյաց 6-րդ նրբ						
		84.	Արմավիր	Արմավիր, ԱԵԿ						
		85.	Երևան	Աբովյան 54						
		86.	Երևան	Նուբարաշեն 1փ. 13ա						
		87.	Տավուշ	Բագրատաշեն 12 փ. 13 շենք						
		88.	Երևան	ք.Երևան, Հերացի 5/1						
		89.	Երևան	Վարդանանց 69, Դինամո ՄՖՊ						
		90.	Երևան	Դավիթ Բեկ 155 Պարեկային ծառայություն						
		91.	Երևան	Քաջազնունի 11						
		92.	Երևան	Շիրակի 56						
		93.	Երևան	Նուբարաշենի խճուղ 14						
		94.	Կոտայք	Բյուրեղավան ԺԲԿ հանրակացարան						
		95.	Երևան	Միեր Մկրտչյան 5						
		96.	Արմավիր	Զվարթնոց օդ. ՈԲ						
		97.	Շիրակ	Կայարանամերձ հրպ. Ղանդիլյան փ. շ. 1						
		98.	Շիրակ	Շիրակ օդ. ՈԲ						
		99.	Լոռի	Այրում ՈԲ						
		100.	Երևան	Խանջյան 51						
		101.	Գյումրի	Հեռուստաաշտարակ						
		102.	Վանաձոր	Հեռուստաաշտարակ						
		103.	Սպիտակ	Հեռուստաաշտարակ						
		104.	Այրում	Հեռուստաաշտարակ						

105.	Վանաձոր	Լոռու 1	
106.	Երևան	Զորափի 40 Շտապ օգնություն	
107.	Երևան	Եղվարդի 3-րդ ձոր ԱԻՆ	
108.	Երևան	Նալբանդյան 13 Սոցապ	
109.	Տավուշ	Իջևան, Երևանյան 10, ԱՎՎ, ՀԾՄԿ	
110.	Շիրակ	Գյումրի Կայարանամերձ հրապարակ, ԱՎՎ, ՀԾՄԿ	
111.	Լոռի	Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ԱՎՎ, ՀԾՄԿ	

Լրացուցիչ և պահուստային կապուղիների տրամադրում և սպասարկում – այդ թվում լիարժեք ինտեգրում առկա ծրագրային ապահովման համակարգին : Կապուղիների տրամադրվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հետևյալ հասցեներում նշված թողունակությամբ:

	Տարածաշրջան	Հասցե	Տրամադրված կապուղի Մբիթ/վ
1.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	40
2.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	40
3.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	20
4.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	10
5.	Երևան	Նալբանդյան 130	20
6.	Երևան	Նալբանդյան 130	10
7.	Երևան	Շինարարների 10/1	10
8.	Երևան	Քաջազնունի 11	10
9.	Երևան	Շիրակի 56	10
10.	Երևան	Զնքուշի 14	10
11.	Երևան	Զաքարիա Քանաքեռցու (Սարկավագի) 48	10
12.	Երևան	Արցախի պ. (Սասունցի Դ շ. 5 կայարանամերձ - 8/16	10
13.	Երևան	Պռոշյան 1	10

		14.	Երևան	Դավթաշեն 4-րդ թաղ.	20						
		15.	Երևան	Դավթաշեն 4-րդ թաղ.	10						
		16.	Բյուրեղավան	ԺԲԿ հանրակացարան	5						
		17.	Հրազդան	Զորավար Անդրանիկի պող. 1	10						
		18.	Իջևան	Մելիքբեկյան 5	10						
		19.	Գավառ	Օգոստոսի 23, 36	10						
		20.	Եղեգնաձոր	Միկոյան 1	10						
		21.	Գյումրի	Պռոշյան 58	10						
		22.	Կապան	Մուշեղ Հարությունյան 1ա	10						
		23.	Արմավիր	Հանրապետության 22	10						
		24.	Վանաձոր	Տիգրան Մեծի պ. 1	10						
		25.	գ. Փարաքար	Զվարթնոց օդ.	10						
		26.	Շիրակ օդ.	Շիրակ օդ. ՈԲ	2						
		27.	Աշտարակ	Երևանյան խճ. 1	10						
		28.	Արտաշատ	Օգոստոսի 23 , 122	10						
		29.	Նոր-Հաճն	Չարենցի 12	3						
		30.	Շարժական 3G	5 հատ	3						

2023 թ. Ընթացքում փոխարինվող կամ տեղադրվող սարքավորումների ցանկը միավորի նախնական գներով

			Անվանումը	Արժեքը /դրամ/						
		1	SFP	16000						
		2	Fiber Optic Patch Cord	5000						
		3	Patch Cord	1000						
		4	Cisco ASA 5506-k9 Network Security Firewall Appliance	350000						
		6	Cisco C891F-K9	200000						
		7	HVIC 4ESW for Cisco 1800 , HVIC9ESW for Cisco 2801, 2811	25000						

		8	Juniper Networks SRX210H-POE 8-Port Gigabit Router VPN Firewall	110000						
		9	Juniper Networks SRX100H	70000						
		10	Yealink SIP-T21P-E2 IP Phone	50000						
		11	3 G մոդեմներ շարժական ինտերնետ կապով	5000						
		12	GRANDSTREAM GS-GXP1610 IP PHONE	30000						
		13	NanoStation M5	52000						
		14	POE Switch	28000						
		15	GRANDSTREAM HT702	32000						
		16	GRANDSTREAM HT814	60000						
		17	Mikrotic CAP Ac	60000						
		18	Օպտիկական մալուխ (մ)	460						
		19	Միացման տուփեր օպտիկական մալուխի համար	15000						
		20	Օպտիկական մալուխի սեղմակ ПСО-110	6000						
		21	UTP մալուխ (մ) նախատեսված ներսի համար	200						
		22	UTP մալուխ տռոսով (մ) նախատեսված դրսի համար	250						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ police_gnumner@police.am

Վ.Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՖՎ&Գ>> ՍՊԸ
ք. Երևան, Ազատության 24, 4 շինություն
<< ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 03004979
հեռ.010-20-81-72
Էլ. փոստ: Info@fvg.am

Վ. Ղազարյան
/տնօրեն/
Կ.Տ

Հավելված N 2
« 09 » 02 2023 թ. կնքված
ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2023-ԿԱՊ/ԾԱՍ/Ա-12 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/4	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ		8 800 000	8 800 000	19 800 000	19 800 000	19 800 000	30 800 000	30 800 000	30 800 000	44 000 000	44 000 000	44 000 000	**44 000 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ police_gnumner@police.am

Վ.Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՖՎ&Գ>> ՍՊԸ
ք. Երևան, Ազատության 24, 4 շինություն
<< ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 03004979
հեռ.010-20-81-72
Էլ. փոստ: info@fvg.am

Վ. Ղազարյան
/ տնօրեն/
Կ.Տ